«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա ՝ Նախագծային մեթոդի կիրառումը հայոց պատմության դասերին

Առարկա ՝ *Հայոց պատմություն*

Ուսուցիչ ՝ Սեդա Սարգսյան

Դպրոց՝ Երևանի Նաիրի Զարյանի անվան հ. 130 հիմնական դպրոց

Ղեկավար՝ Արմեն Ղուկասյան

ԵՐԵՎԱՆ – 2023

Բովանդակություն

1. Ներածություն……. 3 -4
2. Ուսուցչի դերը Հայոց պատմության նախագծային աշխատանքում…… 5-7
3. Միջառարկայական կապերի օգտագործումը Հայոց պատմության նախագծային աշխատանքի ժամանակ……..8 - 14
4. Եզրակացություն ……15
5. Գրականության ցանկ ……17

Ներածություն

Նախագծային աշխատանքը հետազոտական, ստեղծագործական մեթոդների համադրություն է: Նախագծային աշխատանքի հիմնական նպատակը սովորողին տալ հնարավորություն `առաջադրանքների կամ խնդիրների լուծման գործընթացում ինքնուրույն ձեռք բերել հիմնավոր գիտելիքներ: Այս մեթոդը մանկավարժության մեջ նոր մեթոդ չէ , ունի ավելի քան 2 դարյա պատմություն: Սկզբում այն կոչվում էր խնդիրների մեթոդ և կապված էր փիլիսոփայության և կրթության մեջ հումանիստական ուղղության գաղափարների հետ, որոնք մշակել էին ամերիկացի փիլիսոփա , հոգեբան և ուսուցիչ Ջոն Դյուին, ինչպես նաև նրա աշակերտ Կիլպատրիկը: Ջ. Դյուին առաջարկել է ուսուցումը կառուցել ակտիվ հիմունքներով՝ աշակերտի նպատակային գործունեության միջոցով՝ տվյալ գիտելիքի նկատմամբ նրա անձնական հետաքրքրությանը համապատասխան: Դրանով կրթությունը դարձավ աշակերտակենտրոն: Բայց հիմնականում նշում ենք , որ այս մեթոդը սկսվեց լայնամաշտաբ կիրառվել ամերիկացի ուսուցիչ Ուիլամ Հերդ Կիլպատրիկի հայտնի հոդվածի ` ‹‹ Ծրագրի մեթոդ›› ի, (1918թ.) հրապարակումից հետո:

Նախագծային ուսուցումը ուսուցման մի մեթոդ է, որի իրականացման ընթացքում ներգրավվում են կարճաժամկետ (մինչև մեկ շաբաթ), կամ երկարաժամկետ (մինչև մեկ կիսամյակ) նախագծային աշխատանքներում, որոնք պահանջում են տարբեր առարկաներին առնչվող և իրական կյանքում հանդիպող խնդիրների համալիր լուծումներ:

Նախագծային մեթոդի հիմքում ընկած է սովորողի ճանաչողական հմտություն-ների, սեփական գիտելիքները ինքնուրույն ձևակերպելու, տեղեկատվական տարածքում կողմնորոշվելու, քննադատական և ստեղծագործական մտածողու-թյան ձևավորումն ու զարգացումը:

Հայոց պատմության նախագծային մեթոդը ուսուցման համակարգ է, որի ընթացքում սովորողները գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ են ձեռք բերում աստիճանաբար բարդացող գործնական նախագծերի պլանավորման և իրագործման ընթացքում:

Հայոց պատմության նախագծային մեթոդն ուսումնական գործունեության ձև է, երբ

- սովորողներն անմիջականորեն ներառված են ակտիվ իմացական գործընթացում
- ինքնուրույն ձևակերպում են ուսումնական խնդիրը
- անհրաժեշտ տեղեկությունների հավաքում
- մշակում խնդրի լուծման տարբերակները
- վերլուծում աշխատանքի արդյունքները
- կատարում եզրահանգումներ՝ ուսումնական կենսափորձ ձեռք բերելով

Ուսուցչի դերը Հայոց պատմության նախագծային աշխատանքում

Նախագծային ուսուցումը դպրոցում հնարավոր չէ արդյունավետ իրականացնել առանց ուսուցչի դիրքորոշման: Այդ պրոցեսում ուսուցչի ավանդական դերը փոխվում է: Նա իր սովորողների համար պատրաստի գիտելիք տվողից վերածվում իմացական գործունեության կազմակերպչի: Նախագծային գործունեության առանձնահատկությունը սովորողի և ուսուցչի համատեղ ստեղծագործ աշխատանքն է:

Հայոց պատմության նախագծային աշխատանքում ուսուցիչը.

. օգնում է աշակերտներին որոնելու անհրաժեշտ տեղեկույթի աղբյուրը

. ինքն է հանդիսանում տեղեկույթի աղբյուր

.համակարգում է ամբողջ գործընթացը

. խրախուսում է սովորողներին

.պաշտպանում է սովորողների հետ մշտական հետադարձ կապ

Հայոց պատմության նախագծային ուսուցման միջոցով ստացած ամեն գիտելիք կամ հմտություն լիովին համապատասխանում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի կրթության չորս գերակայությունների տրամաբանությանը՝ սովորել իմանալու համար, սովորել կիրառելու համար, սովորել լինելու համար, սովորել միասին ապրելու համար:

Նախագծային աշխատանքի մեթոդի առավելությունը այն է, որ շատ ադապտիվ է և շատ հեշտ կարող է հարմարեցվել տվյալ ուսումնական նպատակներին և պայմաններին: Ուսուցիչը ցանկացած միջավայրում կարող է ուղորդել աշակերտին հայոց պատմության նախագծային աշխատանք կատարել՝ աշակերտի մոտ արժևորելով սեփական հայրենիքը, դարերով կերտած մշակույթը և հայրենասիրությունը:

Թեմայի ընտրության հարցում աշակերտները ազատ են, բայց ուսուցիչը պարտավոր է ոչ միայն ուղորդել, այլև իրազեկել թեմային վերաբերվող բազմաթիվ

նրբությունների մասին, որոնց կարող են առնչվել աշակերտները լուծումներ գտնելու, եզրահանգումներ կամ մտորումներ անելու ճանապարհին:

Հայոց պատմության նախագծային աշխատանքը կարող է լինել դասարանի դպրոցի շրջանակում, բայց ցանկալի է ուղղել դեպի համայնք, դեպի քաղաքացիական կյանք՝ կապը պահելով տվյալ ժամանակի արդի խնդիրների հետ, և տալ համապատասխան լուծումներ: Շատ հաճախ դեպի համայնք ուղորդելով, ուսուցիչը փորձում է աշակերտներին ի ցույց դնել դարերի պատմության թերությունները , շտկել, ապա արդի ժամանակաշրջանում խնդրին լուծում մտածելիս խուսափել դարավոր անցյալի սխալներից, վրիպումներից: Համայնքի խնդրի վրա սևեռվելով միաժամանակ տալիս են լուծումներ, որը լուրջ արժեքային գիտելիք է դառնում:

Ուսուցիչը հայոց պատմության նախագծայի աշխատանքի ժամանակ համակարգում է ամբողջ գործընթացը, խրախուսում է աշակերտի կամ աշակերտական խմբի յուրաքանչյուր քայլ, ձեռքբերում:

Ըստ բազմաթիվ հետազոտությունների աշխատանքի արդյունավետությունը կախված է հիմնականնում խրախուսման մեթոդից: Խրախուսումը աշակերտներին հնարավորություն է տալիս շատ հաճախ ոգևորվելով բացառիկ եզրահանգումների հասնել, հազվադեպ նաև բացասական առումով:

Քանի որ նախագծերի մեթոդները, գործունեության տեսակները, շրջանակները տարբեր են հայոց պատմության ուսուցիչը պարտավոր է նախագծային աշխատանք հանձնարարելիս հաշվի առնել աշակերտների կամ աշակերտական խմբի բնավորության առանձնահատկությունները. Ըստ այդմ ընտրել կամ նրանց թույլ տալ ընտրել ոչ միայն թեման , այլև ձևաչափը:

Օրինակ Ե. Ս. Պոլատը առաջարկում է հինգ հիմնական չփանիշներ, որոնցով պետք է տարբերակել նախագծերի տեսակները.

1. Ըստ նախագծում գերիշխող մեթոդի, կամ գործունեության տեսակի. հետազոտական, ստեղծագործական, դերախաղային, տեղեկատվական, գործնական ուղղվածությամբ (կիրառական):

2. Ըստ առարկայական բովանդակության շրջանակների. մոնոնախագծեր և միջառարկայական նախագծեր:

3. Ըստ հաղորդակցման բնույթի. ներքին կամ տարածաշրջանային, միջազգային:

4. Ըստ նախագծի մասնակիցների թվի. անհատական, զույգերով, խմբային:

5. Ըստ նախագծի տևողության. կարճաժամկետ, միջնաժամկետ, երկարաժամկետ:

6. Ըստ արդյունքի. հաշվետվություն, ալբոմի կազմում, ժողովածու, տեղեկատու, շնորհանդես, գծապատկեր, քարտեզ, տեսաֆիլմ և այլն: Բայց, անկախ նախագծի տեսակից, յուրաքանչյուրն.

- ինչ-որ չափով անկրկնելի է և յուրահատուկ
- միտված է կոնկրետ նպատակին հասնելուն
- սահմանափակված է ժամանակի մեջ
- պահանջում է փոխկապակցված գործունեության համակարգված իրականացում:

Միջառարկայական կապերի օգտագործումը Հայոց պատմության նախագծային աշխատանքի ժամանակ

Միջառարկայական կապերի իրագործումը հայոց պատմության նախագծային աշխատանքի ժամանակ հնարավորություն է ստեղծում սովորողների ընդհանուր ուսումնական կարողությունները և հմտությունները օգտագործել ավելի նպաստավոր պայմաններում: Ժամանակակից գիտության բոլոր ճյուղերը սերտորեն կապված են, և դա պետք է արտահայտվի նաև Հայոց պատմության նախագծային աշխատանքներում: Աշակերտի ձեռք բերած գիտելիքները պետք է ծառայեն ոչ միայն թեստ գրելուն, այլ կյանքի ծանոթ և անծանոթ իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելուն:

Միջառարկայական կապերի իրագործման արդյունքում կազմավորվում է գիտելիքները մի ընդհանուր համակարգում ընդգրկելու, հիշողության մեջ ամբողջական կայուն գոյացություն ձևավորելու կարողություն: Այս ամենի շնորհիվ էլ աշակերտը խնայում է ժամանակ և ունենում է առավել մնայուն գիտելիք:

Մեր օրերում գրեթե բոլոր աշակերտները ունեն հստակ կողմնորոշում (նախնտրած առարկաների ցանկ), ուստի Հայոց պատմության նախագծային աշխատանքում միջառարկայական կապի շնորհիվ լրացուցիչ հետաքրքրություն է առաջանում որոշ առարկաների նկատմամբ, որ մինչ այդ անտեսվում էր: Սա դառնում է խթան դպրոցական պարտադիր ուսումնասիրության առարկաները ավելի հետաքրքրությամբ սովորելու համար:

Երբ սովորողներին ուղղորդում ենք իրականացնել ինտեգրում, պարտադիր չէ դառնան բազմաթիվ ոլորտների փորձագետներ, բայց նրանք պետք է հասկանան, թե ինչպես են ոնորելու և գտնելու այն տարբեր եղանակները, տեսությունները և բովանդակային գիտելիքները, որոնք կարող են ինտեգրվել այնպես, որ կիրառելի լինեն ժամանակակից աշխարհի խնդիրները լուծելու համար: Ավելի բարդացնելով նրանց գործերը՝սովորողները կդառնան լիարժեք քննադատական, վերլուծական մտածողություն ունեցող անհատներ: Անհրաժեշտ է նաև ինտեգրել իրենց սեփական

մշակած ռազմավարությունների, վերաբերմունքի հետազոտությունը և դիրքորոշումը միջառարկայական գործընթացի ուղղությամբ: Միջառարկայական կապերի դերը գիտությունների և արտադրության ինտեգրացման մեջ մեր ժամանակներում առաջնակարգ նշանակություն է ստանում : Քանի որ ուսումնական առարկաները ուսուցանում են գիտությունների հիմունքները, ուստի հրատապ է դառնում նաև ուսուցման գործընթացում միջառարկայական կապերի իրականացումը: Միջառարկայական կապի օգտագործումը երբեք և ոչ մի դասարանում ինքնանպատակ չպետք է լինի, այլ միայն միջոց հիմնական նպատակին հասնելու համար: Այսպես և միայն այսպես պետք է այն դիտվի և օգտագործվի ուսուցման գործընթացում՝ ուսուցման ընդհանուր և դասական ձևերի հետ զուգակցված:

Միջառարկայական կապերի իրագործումը հայոց պատմության նախագծային աշխատանքի ժամանակ ակտիվացնում է սովորողների մտածողությունը, զարգացնում տրամաբանական մտածողությունը, նպաստում ճանաչողական կարողությունների ակտիվացմանը, սրա իրագործումը հնարավորություն է ստեղծում կրկնել կամ վերհիշել ինչպես նաև ձեռք բերել նոր տեղեկություններ, կամ գիտելիքներ նյութական աշխարհի օրինաչափությունների մասին տարբեր առարկաներից: Միջառարկայական կապեր իրագործվում են և' դասի ընթացքում, և' արտաժամյա պարապմունքների և էքսկուրսիաների ընթացքում, նման ձևով ուսուցիչը կենտրոնացնում է համարյա բոլոր առարկաներից ստացած գիտելիքները:

Մեր ժամանակներում առաջնակարգ նշանակություն է ստանում առարկաների և գիտությունների համագործակցությունը՝ միջառարկայական կապերը: Ուսուցման գործընթացում կարևոր տեղ պետք է հատկացնել միջառարկայական կապերին, որոնք ուսուցման հաջողության անհրաժեշտ պայմաններից են: Միջառարկայական կապերի մասին Յ.Ա.Կոմենսկին իր «Մեծ դիդակտիկա» աշխատությունում նշում է, որ ուսումնական առարկաների փոխկապակցված ուսուցումը երեխաներին սովորեցնում է բացահայտել ուսումնասիրվող առարկաների և երևույթների միջև եղած կապերը. «Ամեն ինչ ամրապնդել բանականության հիմունքներով նշանակում է ամեն ինչ սովորել՝ մատնացույց անելով պատճառները, այսինքն՝ ոչ միայն ցույց տալ, թե ինչպես է այս կամ այն բանը տեղի ունենում, այլ նաև ցույց տալ, թե ինչու դա այլ

կերպ լինել չի կարող: Չէ՞ որ իմանալ որևէ բան, նշանակում է իրը ճանաչել իր փոխկապակցվածության մեջ: Պատմության դասաժամերին ուսուցումը պետք է կազմակերպել այնպես, որ կատարելագործվեն սովորողների որոնողական-հետազոտական ունակությունները, զարգանա մտածողությունը, տարածական պատկերացումները, ստեղծագործական մտածողությունը և այլն: Պատմության դասաժամերի մեծ մասը պետք է կազմակերպել մյուս առարկաների հետ կապի մեջ, որը հնարավորություն կտա զարգացնելու սովորողների տարբեր որակներ: Նաև շատ կարևոր է մյուս առարկաների համար՝ կապը գրականության և պատմության հետ:

Միջառարկայական կապերն ուժեղացնում են բոլոր դիդակտիկական սկզբունքների դերն ուսուցման իրական գործընթացում՝ օգտվելով հումանիտար և բնագիտական կրթության հաջորդականության սկզբունքից: Ժամանակակից դպրոցում ոչ բոլոր առարկաներն են դիտարկվում մեկ ամբողջության մեջ: Իսկ եթե այդպիսիք առկա են, ապա դրանք իրար հետ կապվում են պարզապես «կապ», «փոխադարձ կապ», «համակարգային», բառերով: Ընդունելով առանձին գիտությունների (հայոց լեզու, գրականություն, պատմություն, աշխարհագրություն) ունեցած դերն ու նշանակությունը դպրոցում ժամանակակից աշխարհայացք ձևավորելիս մենք պետք է ընդունենք նաև միջառարկայական կապերի վերաբերյալ դասընթացների կազմակերպման անհրաժեշտությունը և նշանակությունը: Դասընթացի նպատակն է բացահայտել աշխարհագրություն և հումանիտար՝ հայոց լեզու, գրականություն, պատմություն, օտար լեզուներ և այլ գիտությունների միջև առկա կապերը, դրանց համակողմանի և միասնական ուսումնասիրության դերը սովորողների հումանիտար և բնագիտական աշխարհայացքների ձևավորման գործում:

Միջառարկայական կապերը, արտացոլելով շրջակա աշխարհի երևույթների և գործընթացների փոխկապակցությունները, էական դեր են խաղում սովորողների մոտ համակարգային մտածողության զարգացման և ընդհանուր-ուսումնական կարողունակությունների ձևավորման գործընթացում. դրանք հնարավորություն են տալիս որևէ ուսումնական առարկայի ուսուցման արդյունքում կազմավորված կարողությունները, հմտությունները փոխանցել այլ առարկաների բնագավառ:

Դիդակտիկայի տեսակետից՝ միջառարկայական կապերի իրագործումը որոշակիորեն բարձրացնում է ուսուցման գիտական մակարդակը, նպաստում սովորողների կողմից նյութի յուրացմանը: Բացի այդ, միջառարկայական կապերի բազմակողմանի իրագործումը հնարավորություն է տալիս օպտիմալացնել հումանիտար առարկաների համախմբի ուսուցման գործընթացը և, դրանով իսկ, կրճատել սովորողների ուսումնական ծանրաբեռնվածությունը: Եթե հումանիտար առարկայախմբի միջառարկայական կապերին վերաբերող ուսումնասիրությունները ստվար մաս են կազմում, ապա աշխարհագրության հետ միջառարկայական կապերի իրագործմանը վերաբերող ուսումնասիրությունները այնքան էլ շատ չեն: Այդ ուսումնասիրություններում հիմնականում քննարկվում են միջառարկայական կապերի իրագործման մանկավարժական պայմաններ, առաջարկվում են ուսուցման համապատասխան մեթոդիկաներ: Չնայած այն բանին, որ միջառարկայական կապերի իրագործումը ենթադրում է սովորողների ինքնուրույն ճանաչողական գործունեության ձևավորում, այնուամենայնիվ, միջառարկայական կապերի հիման վրա սովորողների տրամաբանական մտածողության զարգացմանը և ինքնուրույն ճանաչողական գործունեության ձևավորմանը վերաբերող ուսումնասիրություններ, որքան հայտնի է մեզ, պարզապես չկան: Ասվածը, ինչպես նաև դպրոցում միջառարկայական կապերով ուսուցման տեսության ու պրակտիկայի վերլուծությունն ի հայտ է բերում հետևյալ հակասությունները. մի կողմից կրթության բարեփոխումների հրամայականի, մյուս կողմից հանրակրթության մեջ դրանց իրագործման ուղղությամբ կատարված տեսական և գործնական-մեթոդական աշխատանքների անբավարարության միջև, մի կողմից միջառարկայական կապերի կառուցման միջոցով սովորողներին ամբողջական գիտելիքներ տալու ներուժի, մյուս կողմից դրա իրագործման համապատասխան մեթոդիկաների բացակայության միջև, մի կողմից միջառարկայական կապերի կառուցման միջոցով սովորողների տրամաբանական մտածողությունը զարգացնելու լուրջ հնարավորությունների, մյուս կողմից դրա իրագործմանը վերաբերող տեսական ուսումնասիրությունների և գործնական մշակումների բացակայության միջև:

Հայոց պատմությունը կարելի է համարել ամենա ճկվող առարկաներից , որի դասավանդման ընթացքում մինջառարկայական կապ կարելի է ապահովել գրեթե բոլոր առարկաների հետ:

Հայոց պատմություն- Կենսաբանություն

Կենսաբանության հետ կապը յուրաքանչյուր թեմայի մեջ շատ դյուրին է կիրառել:

Օրինակ՝ երբ ներկայացնում ենք ‹‹Հայկական լեռնաշխարհ›› թեման կարող ենք համեմատել մարդու հետ: Հայկական լեռնաշխարհը վերածում ենք կենսաբանական էակի: Աշակերտներին հարցնում ենք մարդը ունի

1 Արյունատար անօթներ, իսկ որն է Հայկական լեռնաշխարհի արյունատար անօթները. Պատասխան- գետերը, ունեն երակներ և մազանոթներ: Նույն սկզբունքով կան խոշոր գետեր մանր գետեր:

2. Ոսկորները, համեմատում ենք լեռների և լեռնաշխթաների հետ: Կարևորում ենք ամենա խոշոր ոսկորները, դրանցից կարևորները և համեմատում ենք Գլխավոր լեռնագագաթների հետ :

3. Թոքերը ՝ անռառներն են : Եվ այսպես ամբողջական մարդու կառուցվածքը կարող ենք համեմատել մեր հայրենիքի հետ:

Նախագծային աշխատանքում համեմատելիս կարող ենք նույն մարդուն վիրահատել, փոխպատվաստել կամ որևէ օրգանը հեռացնել : Հայկական լեռնաշխարհի դեպքում տարածք կորցնել կամ նվաճել: Փնտրել և գտնել ինչու տվյալ մարդը հիվանդացավ կամ մահամերձ լինելով ապաքինվեց: Նույն սկզբունքով հետազոտական աշխատանքում աշակերտը պիտի վերլուծի ինչու է մեր հայրենիքի սահմանները կրճատվում կամ ինչպես կարող է մեր հայրենիքը հզորանալ: Հաճախ լինում են հրաշքները և անհավանական գաղափարները վերածվում են իրականության:

Հայոց պատմություն- Մաթեմատիկա

Պատմությունն առանց ժամանակագրության նման է հեքիաթի կամ պատմվածքի, ուստի անհրաժեշտ է աշակերտներին ծանոթացնել ժամանակագրական ժապավենի հետ: Ինչպես տարբերակել Մեր թվարկությունից առաջ եղած 550 թվականին կատարված իրադարձությունը Մեր թվարկության 550 թվականի հետ: Ամենա հեշտ

ուղին դա բացատրելու նրանց արդեն ծանոթ կորդինատային ուղին է, որի – նշանը ցույց է տալիս Քրիստոսի ծննդից առաջ եղած թվերը, իսկ + նշանը Քրիստոսի ծննդից հետո եղած ժամանակաշրջանը:

Հայոց պատմություն - Համաշխարհային պատմություն- Հայոց եկեղեցու պատմություն - Հասարակագիտություն- Աշխարհագրություն առարկաների կապը այնքան սերտ է, որ կարծում եմ կարիք չկա անրադառնալու;

Հայոց պատմություն- Ֆիզիկա – Քիմիա տուն, գյուղ, համայնք որպես պետության կամ նահանգի մաս ասելիս կարելի է համեմատել ատոմի, մոլեկուլի հետ: Դիֆուզիայի երևույթը նման է մեր երկրի տարածքից որևէ մաս մեկ այլ երկրի կազմին անցնելը , որքան էլ չհարմարվի , բայց երկար ժամանակի ընթացքում դիֆուզիայի են ենթարկվում տվյալ դեպքում աստիճանաբար ձուլվում: Եթե մինչ այդ տվյալ մարմինները մեր դեպքում տարածքները միմյանցից չեն հեռացնում, վերանվաճում որպեսզի չշարունակվի ստիպողաբար միաձուլումը, գլոբալիզացիան:

Անվերջ կարելի է թվել Հայոց պատմության կապը բոլոր առարկաների հետ: Այդ իսկ պատճառով, երբ աշակերտը նախագծային աշխատանքի թեմա ընտրում է Հայոց պատմությունից հետազոտության ժամանակ միջառարկայական կապի շնորհիվ ձեռք է բերում բազմապիսի մնայուն գիտելիքներ բոլոր առարկաներից:

Համաշխարհ. Պատմ.
Հայոց լեզու և գրականություն
Մաթեմատիկա
Ֆիզիկա
Կենսաբանություն
Քիմիա
Հայոց պատմություն
Աշխարհա-գրություն
Հասարակա-գիտություն
ՀԵՊ
Ինֆորմատիկա
Օտար լեզուներ

Եզրակացություն

Սույն թեմայի հետազոտության ժամանակ կատարեցինք մի շարք դիտարկումներ: Կարծում ենք, որ Հայոց պատմության նախագծային ուսուցումը կարող է բարձրացնել սովորողի մոտիվացիան, հետաքրքրությունը սովորելու նկատմամբ, կօգնի սովորողներին տեսական ու գործնական բաղադրիչները արդյունավետ համակարգել, խթանել որոշակի խնդիրների նկատմամբ սովորողների հետաքրքրությունը, ինչը ենթադրում է տիրապետում համալիր գիտելիքների: Հայոց պատմության նախագծային մեթոդի ներդրումը կօգնի սովորողի համար կանխատեսելի դարձնել առաջարկվող խնդրի լուծումը նախագծային գործունեությամբ:

Հայոց պատմության նախագծային մեթոդի ժամանակ մեծ դեր է կատարում ուսուցչի ուղորդումը: Հետազոտություն կատարելիս համոզվեցինք, որքան էլ շատ է աշակերտի ներգրավածությունը, բայց աշխատանքի իրական արդյունքի համար պատասխանատու է ուսուցիչը: Աշակերտին պիտի ուղորդել այնպիսի թեմայի շուրջ կատարել աշխատանքը, որը նրա մեջ կառաջացնի ոգևորություն: Այնուհետև ուսուցիչը պարտավոր է պարբերաբար խրախուսել աշակերտին , որպեսզի աշակերտի յուրաքանչյուր ձեռքբերում, խնդրի լուծում ունենա առավել ակտիվ հաջորդ քայլի որոնողականություն:

Հետազոտման ընթացքում վերստին համոզվեցինք Հայոց պատմության նախագծային մեթոդի կուլմինացիան միջառարկայական կապն է: Միջառարկայական կապի շնորհիվ ցանկացած առարկայական կողմնորոշում ունեցող աշակերտ սիրով կկատարի հետազոտություն իր նախընտրելի առարկան ծառայեցնելով Հայոց պատմության նախագծային աշխատանքին:

Այսպիսով մեր դիտարկումները ցույց տվեցին, որ Հայոց պատմության նախագծային աշխատանքը կարող է նպաստել հայոց պատմությունը առավել մանրամասն ուսումնասիրելուն, հայրենասիրական ոգու բարձրացմանը: Իսկ հայրենասիրությունը գլխավոր արժեքն է, որ պիտի լինի յուրաքանչյուր անհատի ձևավորման հիմքում և ցանկացած ոք անկախ միջավայրից, մասնագիտությունից պարտավոր է լինել հայրենասեր:

Հ. Գ. Ի դեպ հայրենասեր լինում կամ դառնում են ոչ թե բառերով և ճառերով, այլ իրական գործունեությամբ . թեկուզ չնչին թվացող:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ օրենքը ‹‹Կրթության մասին››
2. Алехин А.Ю. Общие методы обучения в школе.
3. Давыдов В.В. Теория развивающего обучения
4. Смолкин А.М. Методы активного обучения М. Высшая школе
5. Ուսուցման արդյունավետ հնարներ /Ս. Խաչատրյան/ Ֆրիդրիխ էբերտ հիմնադրամ, Հայաստան 2020
6. Ամիրջանյան Յու. , Ա. Ս. Սահակյան / Մանկավարժություն/ ուսումնական ձեռնարկ 2005թ.
7. Ամիրջանյան Յու. Երեխայի իմաստության ակունքներ, 1988
8. Մելքումյան Մ. Միջառրակայական կապերը, 1976
9. https://www.teachforyou.org/
10. https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908 «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք
11. http://boon.am/learning/ Նախագծային ուսուցում. Ալեքսանդր Շագաֆյան (Կրթություն ամենուր և բոլորին):